



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.14  
V-99 1931

17 FEB 2010

32-K  
A 348

ԱՐԱՐՈՒՄ ՄՈՒՐԱԴՅԱՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԿՈՂԻԱԶ ԺԵՐԺԻՄ  
ԲԵԿՄԵՆ ՏԵՐԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ

1981

338.14  
Ա-99

338.14  
Մ-99

## ԿՈԼԽՈԶ ՇԱՐԺՄԱՆ ԲԵԿՄԱՆ ՏԱՐԻՆ

### 1. ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ԱԶԵՐԻ ՑԵՎ ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՊՐՈՖԵՍՈՒՐԱՅԻ ԴԵՄ

Խնչպես ամբողջ Միության մեջ, նույնպես և մետ մոտ, յերբ ամփոփում ենք կոլխոզշինարարության արդյունքների յերկրորդ տարին, պարծանքով կարոք ենք արձանագրել այն հակայական հաջողությունները, վորումնեցել ենք այդ Փրոնտում՝ լենինյան կուսակցության ղեկավարությամբ:

Հարցուր-հազարներով անհատ գյուղացիները այսոր կոլխոզներում լծված են սոցիալիստական շինարարության հոյակապ շենքին: Նրանց շինարարության հակայական թափը ամեն որ, առեն ժամ ջարդ ու փշուր և անում գյուղացու անհառական տնտեսության հետամնացությունը, քարացած վիճակն և աստիճանաբար այն վիրածում խոչոր, գիտականորեն միանգամայն հիմնալորսած և բարձր տեխնիկայով զինված կոլեկտիվ տնտեսության:

Մեր անցած ուղին այսոր միանդամայն ու անվիճելիորեն ապացույցում է, վոր կոլխոզները զարգացել են, աճել ու սոմբացել են միմիայն դասակարգային պայքարի բռվութ:

Հնդամյակի յերկրորդ տարին պրակտիկայով ել

ՊԵՏՀՐԱՆԻ ՏՊԱՐԱՆ  
ՀՊԱ. 1524  
ԳՐԱԴԵՐ. 6194 (Բ.)  
ՊԱ. 885  
ՏԻՐԱԺ 6000

09.07.2013

ապացուցեց աշխ ուրուսունիատների ախալ մինչդ, քոր իբր մեր յերկրում հնարավոր թ կռւակի ներառածումը սոցիալիզմին: Կուլակը, մանավանդ այս վերջին տարվա ընթացքում, ամենահամառ և կատաղի կռիմի եր մղում կոլխոզների դեմ. մութ անկյուններից գընդակ արձակում ամենաակտիվ կոլխոզնիկների վրա, կոլխոզի շուրջը անասելի պրովոկացիա ստեղծում: Նա հրկիպում եր կոլխոզի արտերը, կոլխոզի դոմերը և կոլխոզի ունեցվածքը. նույնիսկ թունավորում այն աղբյուրները, վորտեղից կոլխոզնիկները ջուր եցին խմում: Յեզ դասակարգացին այս ահեղ սրայքարում. այսոր հպարտությամբ կարող ենք մասնանչել, վոր կոլխոզները նորանոր անասելի դիրքեր են գրավում սոցիալիզմի կառուցման ասպարիզում, կուլամին ողակիցու ասպարիզում:

Պայքարի այդ մեծ ֆրոնտում մեր կոլխոզներից ինչքա՞ն հերոսների անուն կարող ենք տալ, վորոնք ցրված են Հայաստանի բոլոր հետամնաց անկյուններում (Թուքիուլստ, Թթու ջուր, Սեվ-Քար, Սարուխան, Ուգումլար, Զափարաբադ):

Թեվակիունելով հնդամյակի յերրորդ տարին, առաջին հերթին պետք է աչքաթող չանել այդ հանգամանքը: Ամեն մի կոլխոզնիկ, ամեն մի չքավոր ու մեջնակ գյուղացի, վարվան կոլխոզնիկը, պետք է մի բան շատ լավ իմանա, վոր կուլակը յերբեք չի ներածի սոցիալիզմին. նա կոլխոզի ամենաակտիւներիմ թշնամին և, առանց նրա դեմ վճռական պայքար մղելու հնարավոր չի ապահովել կոլխոզինարարության վերելքի բարձր տեմպեր:



Հ 9 8 9 4

Կոլխոզ հնդամյակի յերկրորդ տարին ապացուցեց նաև կուլակային պրոֆեսուրայի—կոնդրատյեվ, Զայանով, Դոյարենկո, Սուլխանով և այլն,—թերորիայի և պրակտիկայի անմիտ և լակերական լինելը, վոր իբր թե «ամենալավ» կարմակերպված տնտեսությունը մարդկության համար, դա կուլակային տնտեսությունը եւ. իսկ կոլխոզներն ու սովորողները իրենց կադմակերպվածությամբ, իրենց խոշորությունը յերբեք չեն կարող մրցել կուլակային տնտեսությունների հետ»:

Այս յերկու տարին վերջնականապես ապացուցեցին նաև այդ թերորիայի վարձկան և սուտ լինելը: Ինչպես Միության բոլոր անկյուններում, նույնպես և Հայաստանում հիմնվեցին ու կադմակերպվեցին խոչըն սովորողներ և կոլխոզներ, վորոնց տեմպի մեծության, կազմակերպվածության հետ մրցել չի կարող վոչ մի կուլակային տնտեսություն, թեկուզ ավելի զարգացած յերկրների, չնայած այն հանգամանքին, վոր մեր սոցիալակատական տիպի տնտեսությունները գեռես գտնվում են սաղմնային դրության մեջ, գեռմս նոր են ստեղծվում:

Դրա համար ել ամեն մի կոլխոզնիկ պետք է շատ լավ իմանա այդ կուլակային թերորիայի ուեակցիոն լինելը: Աշխարհում չկա գիտականորեն ավելի բարձր հիմունքներով կազմակերպված տնտեսություն, քան կոլխոզն ու սովորողը: Ու յերբ վաղը մեր յերկրի բանվոր գառակարգը տեխնիկապես հիմնվին կվերադիմի մեր սովորողներն ու կոլխոզները, իսկ այդ վաղը հեռու չե, այն ժամանակ կոնդրատյեվ չի ենայի ծիծաղելի, խղճուկ և ուեակցիոն տեսքը միանդամայն պարզ կլինի նաև ամբողջ աշխատավոր մասսաների համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻНСТИТՈՒՏԱ  
ՅՈՒՆԻՑԵԴԵՆԻ  
Ակադեմի Նայն  
ՀՀՀՀ

## 2. ԿՈԼԽՈՉՆԵՐԻ ՆՎԱԶՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱ- ՆԱՑՍԱՆ ՈՒՂԻՈՎ

Համատարածի հայունի սխալներից հետո մեզ ժողովությունը բարեկամներից շատերը կոլխոզի հաջողությունները լավ չեն տեսնում. այդ պատճառով եկ նոր ստեղծվող կոլխոզի թերությունները քննադատելիս յերբեմն այդ քննադատությունները դանակոծման են վերածվում. իսկ մենք խոշոր նվաճումներ ունենք, վրբոնց մասսայականացման գծով պետք է աշխատեն մեր բոլոր գյուղական կազմակերպությունները։ Առորյա հաջողությունների մասսայականացումով և յեղած թերությունների վերացումով առաջին հերթին պետք է ստեղծել նոր վերելք, պետք և նոր հաղարավոր գյուղացիական տնտեսություններ՝ կոլեկտիվ աշխատանքի կանչել. իսկ մեր կոլխոզների հաջողությունները քիչ չեն։

Տախտակ № 1 °)

Գյուղացու յեկամուտը մինչև կոլխոզ մտմելը և կախողում։

Մինչև կոլխոզ մտմելը

Կ Ա Լ Խ Ա Գ Ա Շ

- |                              |       |           |
|------------------------------|-------|-----------|
| 1. Բառղակի տնտես. 469        | ..... | 833,30 հ. |
| 2. Ջամփը տնտես. . 388,35 հ.  | ..... | 643       |
| 3. Միջակի տնտես. . 434,20 հ. | ..... | 767       |

Տեսնենք ինչ արագությամբ և աճում կոլխոզնի կրթական ուժը չոր թվեր են, վորոնց գեր վեճար չեն հայտնի։ Կամ ի՞նչպես է կոլխոզի դաշտերի բնօքատվությունն ավելանում։

\*) Բանանումնեկ կոլխոզի հետադուման արդյունքներից։

Տախտակ № 2

Քերտական բյուջեի կուեազ իւղ անհասական հիմքություններում  
(ցեսնիներ միջականությունում)

Թ Վ Ա Հ Ա Տ Ն	Մասսական գործեն			Բառղական գործեն			Հարմարություն			Միարություն		
	Մ 2 Հ Ա Տ Ն ցործեն			Պ Ա Բ Հ Ա Տ Ն ցործեն			Բ Ա Բ Հ Ա Տ Ն ցործեն			Հ Ա Բ Հ Ա Տ Ն ցործեն		
	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն	բ ա ն ա ն
1927 28	11,0	9,0	7,3	7,2	9,4	9,0	8,4	8,1	76	75	3,0	6,6
1928 29	11,1	9,1	8,0	7,7	9,8	8,9	7,0	6,3	70	66	10,7	7,0
1929 30	11,2	9,1	8,5	8,0	10,0	9,0	7,5	7,0	100	80	11,0	7,0

իւսրկն, այդ բերքատվությունը իշխալական չե, մեր կոլխոզները դեռ նոր պետք ե զբաղվեն դրանով. և այն ել հիմնովին զբաղվեն: Իսկ թվերը համեմայն դեպո մի բան ասում են մեզ, վոր դեռ նոր ստեղծված կոլխոզները սաղմնային դրության մեջ, նույնիսկ անցնում են հետամնաց, քարացած անհստական գյուղացու տնտեսառություններից:

Կամ տեսնենք, թե ինչպես են կոլխոզները տարեցտարբի խոշորանում, իրենց ձեռքն առնում գյուղի հարաստությունը, ցանքսերը, կենդանիները:

(Համապատասխան № 3 տախտակը զետեղված և 9-րդ հջում):

Եեվ այսպես, ինչքա՞ն հաջողություններ կարող ենք թվել մեր կոլխոզների աշխատանքներից, նրանց կուլտուրակես համեմատաբար ավելի բարձր լինելուց, նրանց աշխատանքի ավելի կազմակերպված, մերենայացված լինելուց և այլ:

Այդ բոլորը մեզ հնարավորություն են տալիս և ավելի վորմորում ավելի համարձակ ագիտացիա տառել և կովել կոլխոզներ կազմակերպելու համար:

Դրան ել ավելացրեք և այն հանդամանքը, վոր այսոր, ավելի քան յերբեն, քաղաքի գործարանները հընարավորություն ունեն մեր կոլխոզների համար մերենայական բարա ստեղծելու:

Արդեն մեր դաշտերում յերկում են Ստալինդրագի յերկաթն ձիերը—տրակտորները: Վո՞ր գյուղացին չի ուզում չութն ու գութանը փոխարինել տրակտորով:

Արդեն կոլխոզի գաշտերում յերկում են մեր գործարանների արագացած կոմբայններն ու մալատիմկա-

Կոլխոզների հիմնական ցուցանիշներ

Քարտահանք	Կարողելու համարժանական թվելու	Կարողելու համարժանական թվելու	Ցանքական թվելու	Ցանքական թվելու	Ցեղական թվելու		Ցեղական թվելու
					Բարեկացից թվաքանակ	Ցեղական թվելու	
1928	1082	2629	105	1445	121	132	655
1929	4350	10326	392	8259	1014	587	3044
1930	20300	59486	2448	49041	4651	2305	14688
1931 1/II	43000	143387	2490	114400	15062	5989	30243

ներթ: Առօ՞ր չըսուլացին չի ուզում կոլխագ մտնել և  
դարերի հետամնացության սիմբոլ կամն ու մանգանց  
իրավարինել տեղինքիայի վերջին խոսքի համաձայն  
շինված մեքենաներով:

Այսոր արդեն մենք հնարավորություն ունենք ըս-  
տանալու այնպիսի ինկուբատորներ, վորոնց մեջ կա-  
րելի յեւ տեղավորել հարյուր-հազարից ավելի ծու, վո-  
րը փոխարինելու յեւ հավին և միանգամից կոլխողին  
տալու յեւ հազարներով ճուռեր: Վո՞ր գյուղացին չե-  
ռովի իր թուխու փոխարինել ինկուբատորով:

Վերջապես առաջիկա յերկու տարում ելեկտրիֆի-  
կացիայի յեն յենթարկվելու Յերեանի շրջապատի, Զո-  
րագետի և Քանաքեռողեսի շրջանների բոլոր կոլխողնե-  
րը. վո՞ր գյուղացին չի ուզում կոլխող մտնել, փոխու-  
րինել իր ձեթի, նաևլթի ճրադը ելեկտրական լապտե-  
րով. ամբողջ տնտեսությունը և իրա միտքը զինել ե-  
լեկտրականությամբ և ուժիո ուժերով:

Յեզ կամ վո՞ր գյուղացին չի ուզում իր անսահ-  
ման, անկուտուրական, յայրենական շրջանի տեխնի-  
կայով «դինված» գոմերը և ախոռանման տները, «ս-  
նուշահոս դոմը, ողա ակումբները» վերածել լուսա-  
վորված, տեխնիկայի վերջին խոռոչը կահավորված  
գոմերի, իսկ գյուղերն ել վերածել կոլխող-քաղաքնե-  
րի—իրենց մանկամսութներով, մանկապարտեղներով,  
ակումբներով, կինո-շենքերով, թատերաբահներով.  
ուզում և գյուղացին այլ կյանքին դնալ, և այն ել  
միանգամից, դյուղացիական լայն միլիոնավոր մաս-  
սաներով, որագ կերպով: Նա պետք ե անվերադարձ  
հետեւի պրոխտարիատին և կոլխողի ու կոլեկտիվ

աշխատանքի միջնորդ տիրանա արականությն, կրաքայ-  
նին, ինկուբատորին, ելեկտրականության, ուղղիոյին  
և, վերջապես, այն բոլոր բարիքներին, վոր տալիս  
և պրոլետարական յերկրի և աշխարհի նորագույն  
անկաշկանդ դիտությունը և տեխնիկան:

Յեթե չի ուզում, թո՞ղ մնա, սովասի, միքիչ ել  
մոտածի: Համենայն դեպս մի բան պարզ ե. վոչ կու-  
լակը, վոչ կուլակի թագավորը, վո՞չ Ամերիկայի «մի-  
լիոներ-հոքեղայրը», վո՞չ ել գյուղական անտե-  
սության հետամնաց տեխնիկան հնարավորություն չեն  
սաւլու չքաղաք և միջակ գյուղացուն դուրս գալու  
իր այսորված ծանր դրությունից, տնտեսական հետա-  
մնացությունից: Ահա այս հանգամանքը պետք ե ի  
նկատի ունենան բոլոր գյուղացիք և գյուղական  
ֆրոնտի բոլոր աշխատողներն իրենց աշխատանքի աս-  
պարիղում, յերբ խոշոր բնիքան դրանն են կանգնած:

### 3. ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՈՎ

Կոլխողները յերեք չի կարելի ամբայցնել, գեպի  
նրանց նոր հոսանք ստեղծել, նրանց գարձնել ապրան-  
քային կոլխողներ, յեթե հնդամյակի այս յերրորդ տա-  
րում կոլխողները և կոլխող-ապարատն ամբողջու-  
թյամբ չըրադիմեն իրենց թերությունների հայտա-  
մերժան և նրանց խսպատ վերացման դրձով:

Իսկ խոշոր նվաճմամների հետ կոլխողները ունեն  
խոշոր թերություններ ևս: Մի՞թե գաղտնիք ե, վոր  
շատ կոլխողների գեռ կոլխողի ունեցվածքի վրա չեն  
նայում ինչպես իրենց սեփական ունեցվածքի, չեն  
դողում կոլխողի ամեն մի չոփի համար, ինչպես այդ

կատարվում եր անհատական տնտեսության մեջ։ Քիչ է փաստեր ունենք բամբակագործական շրջաններից, յերբ բերան յեկած բամբակը տավարը վոչչացնում ե, իսկ կոլխողնիկը անտարբեր կանդնած նայում ե և միջոցներ ձեռք չի առնում։ կամ բամբակը դեռ լիովին չհավաքած՝ արտը վարում են։ Խնամքով չեն վերաբերվում կոլխողի գույքին, կենդանիներին։ իսկ այս տրամադրություններով կոլխողը մեծացնել, ամրացնել—չի կարելի։ Պետք ե խսդառ վերացնել, մինչև անդամ կոլխողից գուրս վլոնդել նրանց, վորոնք խորթ աչքով են նայում կոլխողի գույքին, ունեցվածքին, կամ հանդես են բերում չտեսնված թափթիվածություն, անտարբերություն դեպի կոլխողի ցանքերը, աշխատանքը և դույքը։

Մեր կոլխողնիկներն ու կոլխողապարատը վորքան մեծ գիտակցական վերաբերմունք ցույց տան դեպի այս փաստերը, այնքան կարգացնեն և այնքան նոր տեսմունքը կտան կոլխողչինարության։

Յերկրորդ հարցը, դա հաշվապահության և հաշիվների խառնաշփոթ լինելն ե, վոր քիչ չի աղբում մեր կոլխողների ամրացման և նոր վերելք ստեղծելու գործում։ Դեռ ի՞նչքան կոլխողներ և կոլխողնիկներ ունենք, վորոնց հաշվաները չեն փակված։ կամ դրանցից քանիսը դեռ չզիտեն, թե իրենք կոլխողից ստանալի՞ք ունեն, թե՞ պարունակություն։ Այդպիսի կոլխողնիկները ի՞նչպես կարող են լինել կոլխող դաղափարի ագլուտորները։ նույնիսկ դրանցից միքիչ անկայունները ի՞նչպես կարող են գուշ լինել կոլխողից։

Հաշվապահությունը պետք ե լինի կոլխողի հայելին։ մեր կոլխողները և կոլխողապարատը պետք ե

այնպես կաղմակերպեն այդ հայելին, վոր նրա մեջ ճշգրիտ կերպով արտացոլի ամեն մի կոլխողնիկ և կոլխողնիկի հաշիվ։ Ամեն որ, ամեն շաբաթ, ամեն ամիս կոլխողնիկը պետք ե իմանա ինչքան աշխատանք և կատարել կոլխողում և այդ բանը պետք ե արձանագրված լինի նրա աշխատանքի գրքույզկում։

Յույց տանք նաև այդ խմբում մեր վճռականությունը։ Յերկրորդ տարին պետք ե լինի հաշվապահության խառնաշփոթության վերջին տարին։

Մյուս կարենոր հարցը, դա կոպտության ու թայ-Փաբաղության հարցերն են կոլխողներում։ Այդ յերկու յերեվույթներն ել անհատական, հետամնաց տնտեսությունից մնացած վաստ ժառանգություններ են, վորոնք, դժբախտաբար, քիչ չեն խանդաբում մեր կոլխողների աճմանը։

Վո՞ր դյուրացին կոլխող կմտնի, յերբ տեսնում ե, թե ինչպես կոլխողնիկները մի ինչ-վոր հիմար բանի համար իրար ոճիքից են բռնել, կամ իրար են հայհոյում, փոխանակ աշխատանքի գնալու։ և կամ վո՞ր գյուղացին կոլխող կմտնի, յերբ մեր կոլխողապահատի աշխատողները ամեն ինչ անում են բղավոցով բատի աշխատողները տանը ինչ անշերով, կնուսով։ կամ հին տանտերի նման մնչերով, կնուսով։ կամ հայհոյանքով են վճռում։

Վո՞ր կոլխողը կարող ե յերաշխիք տալ կուլակի դեմ բավ պայշտարելու, յերբ կոլխողի աշխատողների մի մասը վորոշում են խնդիրները լուծել թայֆայական տեսակետից կամ ինդիրների լուծմանը մոտենում են իրենց պապենական վրեժը լուծելու տեսակետից։ իսկ այդ տգետ քինախնդրությունից կուլակը ոգոսվում է, և եղք ե առաջացնում կոլխողում։ Հետա-

դայում, յեթե նրան հաջողվածք և այդ ճեղքվածքը լայնացնել—կամ կովսովն և քայքայլում, կամ քայքայման դռանը կանչնում:

Մեր կովսովնիկները պետք ե սովորեն լավ բանակայինների նման կովել, այրել այդ թերությունները, արմատախիլ անել այն բոլոր սովորույթները, տգետ հատկությունները, վոր իրենց հետ կովսող են բերել գյուղացիք, վոր լինելով հին, վտած, մեռած հասարակակարգի սովորույթներ, վարակում են կովսողին և թույլ չեն տալիս նրան ավելի արագ զարգանալու:

Մեր կովսովները պետք ե սովորեն ինքնաքննադատության զենքի որինավոր գործածմանը, չպետք և թողնեն, վոր այդ զենքը ժանդուի, չպետք և թույլ տան, վոր այդ զենքը անցնի կուլակի՝ թշնամու ձեռքը, և թշնամին այդ զենքով կովի կովսողի դեմ:

Բայց և իկան ինքնաքննադատության կրակի տակ առնելով կովսովներում նկատված բոլոր թերությունները, լայն մասսաներին մասնակից գարձնելով այդ թերությունների հայտաբերմանը—քիչ չե ոգնի յերրորդ տարին դարձնել նոր բեկման տարի, կուտակցության հիմնական լողունդը կյանքի մեջ անցկացնելու, դյուլը դեսի համատարածը տանելու:

Այդ աշխատանքները հնարալոր կլինի կատարել, յեթե կովսովների հաշվետու կամպանիան անցկացնելիս վերից վար կանոնավորվի կովսոդապարատը՝ նորոր կովսովներից, մասավանդ կովսոդապարատներից պետք ե հեռացվեն դասակարգայնորեն խորթելեմենտները կամ նրանց ագենտները: Կովսոգապարատը վերից-վար պետք ե բռնեն աշխատանքի լավագույն հերոս կովսովնիկները, աշխատանքի մեջ տըն-

տեսակախարսոթյամբ աչքի զննեած միջակները, կովսոդի համար ակտիվորեն կռված կանայք, վորոնց, գժրախատաբար, հաճախ թերաղնահատում են: Ապա յերիտասարդորդ բրիդադիրներն ու 25-հազարականները, կովսոգարժման գժվարին տարվա հերոսները:

Կովսողի ամբողջ ապարատը պետք ե կաղմված լինի այնպես, վորակեսղի նրա յուրաքանչյուր պտուակը աշխատի անսահման անձնվիրությամբ և վճռականությամբ: Դա նույնպես կլինի յերաշխիք՝ կովսող-չարժման նոր, բայց և իկան վերելք սկսելու:

#### 4. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈԼԽՈԶ ՖՐՈՆՏՈՒՄ

Քաղաքի արդյունաբերության Փրոնտից հետո ամենահիմնական հարցը՝ վոր այսոր վնում ե մեր առաջ 16-րդ համապումարը՝ դա կովսովների խնդրով դրադվելով ե, կովսովներում բարձր վերելք ստեղծելու ե, նրանց մասնագիտացնելն ու ապրանքային դարձնելու ե: Զնայած մեր ունեցած մի շարք հաջողություններին, այնուամենայնիվ այդ ասպարիզում կատարված աշխատանքը բավարար լինելուց հեռու պիտի համարել: Դեռ հիմնական բեկում չի ստեղծվել մեր դյուղական Փրոնտի մի շարք աշխատողների մեջ: Իսկ մեր առաջ բավական լուրջ խընդիրներ են դրված: պահանջվում ե ամենավճռական աշխատանք և շրջադարձ դեպի այդ Փրոնտը:

Տարբառ № 4

Կոլեկտիվ շարժման և առաջնորդ Հայապուտանում  
1930 և 1931 թ.

	Առ միջն 30 թ.	Առ միջն 30 թ.	Առ միջն 31 թ.	Գաղղան Մայիս 1931 թ.	Առ միջն ակտիվ 1931 թ.	Առ միջն տարբառ 1931 թ.
Կոլխոզների թիվը . . . . .	303	380	495	593	675	
Նրանց մեջ մտած անտեսական թիվը . . . . .	7575	15014	20300	43000	55000	
Կոլխոզի վագան 0%-ը այս թվան դյուզացիակ. անտեսական տոկոսն և մտել կոլխոզի մեջ . . . . .	3,9	9,0	12,1	25,0	32,0	

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր գյուղական կազմակերպությունները քիչ անելիքներ չունեն գյուղական անհատական հոկտեմբական սեկտորը կոլխոզ ներդրապելու և նրան կոլխոզում կազմակերպելու ուղաստիքակելու տեսակետից: Ամեն մի կոլխոզնիկի և վաղվան կոլխոզնիկի համար պայքարի պետք է դուռս դա մեր գյուղի ամբողջ հասարակայնությունը—կուսաքաղը, կոմսոմոլի բջիջը, գյուղխորհուրդը, արտադրական կոոպերացիան, սպառողական կոոպերացիան. դրանց բոլորի աշխատանքի չափանիչը պետք է լինի, թե նրանցից յուրաքանչյուրը վորքան հաջող և կովել կոլխոզ լինելը ստեղծելու, կոլխոզները ամրացնելու տեսակետից:

Ինչո՞ւ այդ հարցով չպետք է զբաղվեն մեր կուսաքաղները, կոմսոմոլի բջիջները կյանք տան կոլխոզին, գյուղը ելեկտրականացնեն կոլխոզի ոգտին: Իհարկե, ինչ խոսք կարող է լինել, այն մասին, վոր առաջիկա

ամիսներին վո՞չ մի կուսակցական և կոմյների տակական կոլխոզից դուրս չպետք է լինեն. Ել ի՞նչ կուսակցական և կոմսոմոլիստ, վոր այս տնտեսական հեղափոխության մեջ որերին պոչեց իդրան, իամ նույնիսկ կիսանդրաբեն կոլխոզին:

Ել ի՞նչ գյուղխորհուրդը, վոր նրա աշխատանքի եյությունը այս ըջանում, յերբ գյուղում սոցիալիզմ ենք կառուցում, գյուղխորհուրդի հիմնական հարցը կուսող կառուցելը չպիտի լինի, մասսաներին զեպի կուսող տանելը չպիտի լինի, կուլտակի գեմ ամենառժեղ սոցիարբելը չպիտի լինի: Այդ ըջանակածը պետք է կատարեն մեր նորընտելիք գյուղխորհուրդները, նրանք պետք է լինեն կոլխոզի ամենաակտիվ պաշտպանները, կոլխոզ կառուցողները: Ինչպես իՍՀՄ-ի ժողովածուրին նախագահ, հին բայլշենիկ ընկ. ՄՈՂԱՏԾՈՎՆ է ասում՝ «Հիմնական խորինը խորհրդի, դա նրա կոխին է կուլակի գեմ, դա նրա ովնությունն է կոլխոզարժաման ծագարձանը, դա նրա հիմնովին յերես թեքելն է դեպի կոլխոզը»:

59897 66

Նույնը վերաբերում է նաև սպառկոռպին, վորը դեռ չառ հեռու յե կոլխոզ կառուցող, նրան ոժանդակությունը լինելուց. խակ արևեն ժամանակին և, վոր նրանք զբաղվեն կոլխոզների մնալի, կենցաղային հարցերի և կուտուրական հարցերի կազմակերպման խորիներով: Վորքան շուտ յերեսները թեքեն դեպի այդ աշխատանքը, այնքան ալելի բովանդակալից կրառնա նրանց ամբողջ որդունելյությունը:

Վերը հիշած որդանները պետք է կարողանան վորքի հանել կանանց հասարակայնությունը՝ հողուականությունի պատճեն. ամեն մի աշխատակայնությունը, պատճեն



ըսապես կոլխողուհու պետք ե դարձնել կոլխողի համար մարտնչող ազիտատոր:

Ինչո՞ւ անձներագարձ կոլխող մտնել ցանկացող դյուդացիներից չկաղմակերպել կոլխող մտնողների նախաձեռնող խմբակ և նրանց դյուղ չուզարկել մեղ հարադատ տարբերին վոտքի հանելու, կոլխող բերելու: Ինչո՞ւ ջլաղմակերպել կարմիր խնամախոսների խմբակներ, դրանց միջոցով նոր վերելքը չստեղծել. կամ ինչո՞ւ դյուղի զօրացրիած կարմիր բանակային-ներին, կարմիր պարտիզաններին չդարձնել կոլխողի ակտիվ կաղմակերպիչները:

Պետք ե մեր դյուղի բոլոր կաղմակերպություններն առաջիկա ամեներին յերեսնեցը թեքեն վեպի կոլխողը: Ամբողջ դյուղը վոտքի հանեն, յուրաքանչյուր վոչ կոլխողների խրճիթը մտնեն, նրան համոզելով կոլխող բերեն:

## 5. ԶԿՐԿՆԵԼ 1930 թ. ԳԱՐՆԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

Իչարկե, այժ աշխատանքները տանելու համար, համատարածի չրջանուամ, տեղերում կատարված մի շարք սխալները ամենավճառական կերպով սեպաք և ուղել և նորերը չկը կնել:

16-րդ համագումարից ցույց տված ճանապարհով դնալով, պետք ե բոլոր պարզ տիպի կոլխողներին կից և միայն թույլ արտելներին կից ստեղծել չքավորական խմբակներ: Նրանց հիմնականուամ սխատեմատիկ կերպով զբաղեցնել կոլխողի ստեղծման, ամրացման բոլոր աշխատանքներով: Դասակարգավիճան պայքարի սրման այս յեւրորդ տարուամ կոլխողներին կից կաղմակերպիչն չքավորական խմբակները առանձնահա-

տուկ նշանակություն են ստանուամ. Նրանց կազմակերպվածության, կոլխողի հերթական ինդիբներով կանոնավոր գրադպիկը, ամենահիմնական գործը կլինիկ կոլխողի ուժեղացման և կուլակի ողակման:

Ինչ վերաբերում է միջամիջի հարցին, ապա նրան կոլխող ներդրամելիս կատարենք լենինի ասածները՝ «Միջակին պետք և դրամի դեպի բանվոր դասակարգը ու չաղպիր վերաբերմունքով դեպի նրա կարիքը, կուլի նրա հետամնացության դեմ, կուլել միայն իդեալիս ներգործելով նրա վրա, և վոչ թե ճնշումի դիմել: Մի ուրիշ տեղ առում է «Զկա սպելի հիմար բան, քան թեկուղ մտածելն անդամ ճնշում գործել միջակ դյուղացու տնտեսական հարաբերության բնադրվածում»: Այս հիմնական լոգունդից յենելով, հնդկամյակի յերրորդ տարվա աշխատանքները պիտի տանել այսպիս, վորպեսզի միջակությունը ամբողջությամբ լինի կամ կոլխողի ներսում և կամ կոլխողի չուրջը, բայց վո՛չ յերրեք կուլակի մոտ:

Տախտակ № 5  
Կոլխոզների անդամների սոցիալական կազմը  
տոկոսներով.

Թղթական	Բատրակներ և բանկու- ներ	Զքավոր անտեսութ.	Միջակ տըն- ակսություն ներ	Մասնակ ութիւն
1  6-27 ₥.	—	88,8	11,2	—
1  6-28 ₥.	6,1	75,3	18,2	0,4
1  6-29 ₥.	7,2	70,0	22,6	0,2
1  6-30 ₥.	13,5	51,1	30,4	5,0
1  10-30 ₥.	22,6	57,3	19,0	1,1

Ի՞նչպես այս տախտակը ցույց է տալիս, այդ ասպարիդում պարծենալու շատ բաներ չունենք, չնայած այն հանգամանքին, վոր մեր ամրացած կոլխողներում, վորոնք դառել են խորհրդային կառավարության հենարանները գյուղում, միջակ կոլխողնիկը պակաս յեռանդով ու անձնվիրությամբ չի աշխատում կոլխողի գաշտերում, կոլխողի ամրացման համար, և կամ պակաս յեռանդով չի կուլում կուլակի դեմ, նույնիսկ կրծքով պաշտպանելով կոլխողը կուլակի վայրագություններից :

Եերորդ հիմնական հարցը այս վերելքի որերին, սղգաբեմակության հետամնաց մասի կենցաղային հարցերին ավելի դգույշ և խելոք մտածում ունենալն է։ Դա առանձնապես վերաբերում է թուրքական, քրդական և սասունցիների գյուղերին, վորոնց մեջ տարվելքը աշխատանքի վրա, դժբախտաբար, բավարար ուշադրություն չի դարձված։

Ահա, յերբ այս յերեք հիմնական խնդիրները հաջող լուծեն մեր գյուղական մասամները, միաժամանակ շարունակեն համառորեն կուլակին ողակելով, տալով նրան ոնտեսական նորանոր հարվածներ, բնում խեղդելով նրա ամեն մի փորձը՝ կոլխողին վնասելու ասպարիդում, բոլոր կողմերից և բոլոր կամպանիաների միջոցով ողակումն ամելի նեղացնել, վորակեսզի ըստեղծվեն նախալայմաններ՝ նրան համատարած կուլեկտիվացման հիմունքներով վորակես գասակարդ վոչնչացնելու։

## 6. ՊԼԱՆԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԴԻՄԱՎՈՐԵՆՔ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՈՐԴԻ ՏԱՐԻՆ

Այս գարունը պիտի լինի մեր պլանային աշխատանքի դարունը, կոլխող-ապարատը վերից-վար,

20

մինչև վերջին ամենափոքրին կոլխողը պիտի ունենած ցտած, լայն մասամների կողմից քննված բայց եվիկ-յան ողբաններ։ Զմեռվա ամիսները պիտք ե լինեն այդ պլանների վերջնական ստուգման, մասսայականացման և ընդունման որեր, վորից հետո կոլխողները պիտք ե սովորեն նույնագիտականությամբ կատարել և գերակատարել ընդունված պլանները։

Կոլխողին չպետք ե վայել լինի անպլան աշխատանքը, նրան վայել չպետք ե լինի մի անգամ ընդունված պլանը կատարման ընթացքում վերանայելը, նըրան վայել չի նաև ոլլանների թերակատարումը, ինչպես այդ կատարվեց մի շաբաթ կոլխողներում։ Ուրեմն՝ բոլոր կոլխողները և կոլխող-ապարատը պիտք ե ունենան իրենց տարեկան պլանները, յեռամյա պլանները և միամյա որացուցային պլանները։

Պլանային աշխատանքի հետ սերտ կապված ե վերադաս որդաններին ժամանակին վիճակագրական տեղեկություններ հասցնելը, վոր քիչ նշանակություն չունի կոլխող մեծ բանակի ողակների կազի և դեկավարման տեսակետից։

Ի՞նչպես կարելի յէ զեկավարել կոլխողին, ոժանդակել նրան, յեթե չգիտես՝ վո՞ր ժամանակ պլանի վոր մասն և կատարված։ Կոլխողները, ըրջանային կոլխող-ապարատը առանձնահատուկ ուշադրություն պիտք ե դարձնեն այլ հանդամանքի վրա, սոցիալիստական աշխատանքի ֆրոնտում ավելի կուլի ընդունակ դարձնեն կոլխողային մեծ բանակը։

Պլանային աշխատանքների հետ կապված են նրանց կատարման ստուգման հարցերը։ յերեմն բազմաթիվ լավ-լավ վորոշումներ և հանում մեր ամրող ապա-

բատը վերից-վար, իսկ կատարվել են արդյոք գը-  
րանք, թե վոչ, դրանցով չենք եւ հետաքրքրվում։ Յե-  
թե այդ ժամանակին մի հարյուրերորդը նվիրենք  
ստուգելուն՝ արդյոք կատարվել են այդ պլանները,  
թե վոչ, յեթե վոչ, առաջ ինչո՞ւ, այն ժամանակ մեր  
նորութեղծ ազարատում նկատված անպատճախանա-  
պիությունները չեն լինի, վորագիսին այժմ ե նկատ-  
վում։ Իսկ այդ թերությունը առաջին հերթին մեծ  
վտանգ է մեր կոլխոզ-ազարատի և նրա աշխատանք-  
ների ասպարիզում։ Այդ կլինի քիչ վորոշել, բայց կոլ-  
խող աշխատանքի բոլոր ողակներում հետեւիլ, վոր-  
պեսպէ վորոշածը կատարվի և այն եւ ճիշտ ժամա-  
նակին կատարվի։

Կատարման, ստուգման աշխատանքը քիչ չի նր-  
պատճի մեր բայլչելիքան վերելքին, մեր դարնամա-  
ցանի բայլչելիքան կարմակերպմանը։

## 7. ԽՈՒՍԱՓԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ «ԿԱՄՊԱՆԻԱԿԱՆ» ԲՆՈՒՅԹԻՑ

Առաջին հիմնուելան հանգամանքը բայլչելիքան  
յերբոք գարնան ճիշտ կարմակերպման, դա բոլոր  
աեատիլ կամպանիաների, ինչպես և գարնանցանի  
կամպանիայի աղելի ճիշտ որբանավորված տանելն և  
և հիմնականում նրանց կոլխոզ վերելքի հետ կապէն  
է։ Այդ ստուգարիզումն եւ ինչպես մեր կոլխոզ-ազա-  
րատը, նույնույն մի շաբաթ մթերող որգաններ քիչ չեն  
մեղանչել։

Հիմնականում կոլխոզները 8 տոկոսով են մաս-  
նակցել հացամթերմանը, գյուղացիությունը 14 տո-  
կոսի չափ, վորը անպայմանորեն աղոթել և կոլխոզի

վերելքի վրա բացասական խմասով։ այժմ այդ կամ-  
պանիայից դաս առնելով, կենաքանիների մթերման  
կամպանիան չպետք եւ տարպիր այնպիս չոր բյուրո-  
կրասովիկ կերպով։ նա պետք եւ ծառայի միաժամանակ  
քաղաքի պլոտետարիատին միս հասցնելու նպատակին։  
Մյուս կողմից եւ անասնապահական կոլխոզների հո-  
տերի կոմպլեկտացման։ Գնված բանդումն կովերը,  
խոզերն ու վոչխարները առաջին հերթին պետք եւ  
վերածվեն կոլխոզի հոտերի, իհարկե նրանց առլահո-  
վելով կերով և գոմերով։

Տախատկ № 6

1930 թ. մքերումները կոլխոզներում.

Կուլտուրա- ները	Գյուղական արն- աեռություն. կո- ւեկան, %	Կոլխոզները աղելի հետ չայտո- ւական ամբողջ սահմանը մթերքների ըստ մթ. աշխա-	Կոլխոզներում մթերքած ընդա- մեկնը ցենտներ- ներով
Հացահատիկ	8	13,9	14306
Բամբակ	13,4	18,4	19965
Խաղող	12,8	29,2	54300

Կոլխոզ ամբողջ ազարատը և ամեն մի կոլխոզ-  
ների պետք եւ պատրաստ լինեն ժամանակին ընդունելու  
և աչքի լույսի պես պահելու բոլոր պետքական անա-  
սունները։

Դաս առնելով անցկացրած կամպանիայի թերու-  
թյուններից, պետք եւ աշխատել չկրկնել այն, և գրա-  
նով հնարավորություն չտալ կուլտակին պըսվակացիա-  
յի յենթարկելու կոլխոզներին։ Անասունների մթերման  
հիմնական հաշվառմանությունը և նրա նպատակները ամեն  
մի կոլխոզնիկի համար պարզ պետք ել լինի, վորաց-

դի այդ կամպանիան ամելի լավ ծառայի կոլխող վերելքի կազմակերպմանը և խոչոր ապրանքային կուտազների ստեղծմանը:

## 8. ԱՎԵԼԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԿԵՐՊՈՎ ԴԻՍԱ- ՎՈՐԵՆՔ ԳԱՐՆԱՆԸ

Նախապատրաստական աշխատանքները պետք են այնպես տանել, վոր գարնանացանը սկսելիս չկրկնվեն այն խայտառակությունները, վորոնք տեղի ունեցան անցյալ տարի:

Ժամանակին պլանով վորոշենք, թե նախատեսված, վոր տարածությունը և ինչ կուլտուրայի տակ են ընկնում, այդ տարածությունները անպայմանուրեն ձշտենք, վորպեսդի դուրս չդա, վոր կոլխոզը պարագալուն 50 հեկտար, բայց ցանել են 40 հեկտար: Յեթե առաջին անգամ թույլատրելի յեն սխալ կատարել, ապա այն յերկորորդ անգամ կրկնելը միանդամայն անթույլատրելի յեն:

Յերկրորդ, բոլոր մեքենաները և քարշող ուժը պլիսի հաշվի առնել, միաժամանակ միջոցներ ձեռք առնել՝ ծածկելու մեքենայական ուժի և կենդանի ուժի պակասը: Նախառեսել մեքենայի աշխատանքի բոլոր մակամանությունները, ժամանակին մաքրելով ու վերանորոգելով վերանորոգման բոլոր կարոտ մեքենաները:

Յերրորդ, մինչեւ գարնանացան սկսելը բոլոր տեսակի սերմերը դառել, պատրաստել: ինչպես թշվերն են ցույց տալիս, կոլխոզները մինչև այժմ մաքրել են իրենց սերմացուի միայն 85 տոկ.: Դա, իհարկե, անսերելի յեն: Կոլխոզը սերմացուն առանց դառելու հողին

չպիտի ատ: Դա վերաբերում է, իհարկե, ցորենի ախտահանմանն ել. միայն այդ ախտահանումը պետք է կատարել գյուղատնտեսների ցուցումներով:

Նախապատրաստական աշխատանքներին են վերաբերում նաև գանադրան տեսակի աղբերի, պարարտանյութերի (մոխիր, գոմաղբ) ոգտագործումը, վորոնցով յերբեմն լցված են գյուղի փողոցները: Վոչ մի պարարտանյութ գարնանացանը սկսելիս գյուղի փողոցներում թափանց չպետք ել լինի, նրա տեղը դաշտերն են:

Վերջապես ճշտորեն պիտի կատարել և գերակատարել այն բոլոր նախապատրաստական աշխատանքները, վորոնք նախատեսված են կոլխոզի պլաններով և Հողգործկոմատի կողմից աղբոմինիումումով:

Յերրորդ, բոլոր նախապատրաստական աշխատանքները տանենք ինչպիս լավ կոլխոզնիկ և վոչ թափիթիված գյուղացի, յերբ նախապատրաստական աշխատանքի վրա կնայենք վորպես մեր սեփական աշխատանքին և վոչ իբրեւ «կաղյոնի» աշխատանքի գարնանացանի պլանի կառարումը 50 տոկոսով արահովված կլինի, մնացած 50 տոկոսն ել պետք եւ արահովված կարնանը համերաշխ չարքերով դաշտերը դուրս գովել գարնանը համերաշխ չարքերով դաշտերը դուրս գալով և ցույց տալով կոլխոզին հատուկ կադմակերպվածություն ու ուժ:

1931 թ. գարնանացամի ծրագիրը

		Վ	Ո	Ր	Ի	Ծ	
Արդյոջ ցանցների առարկան	Համարական հաշվային պահանջման	Համարական հաշվային պահանջման	Վերաբառություն	Կարգավորություն	Խոստություն	Տեղական կուտակություն	
Հնդամենը Հայաստ.	337888	182980	25000	2820	20000	20000	5000
Պորից կոլ- խողն.	101215	57419	12000	1100	5900	10000	2800
Կոլխոզ. ընդ- դիկ. % -ը	30	31	48	39	29	50	45

Այս տախտակը ցույց է տալիս, վոր յերրորդ տար-  
վա բախտի հիմնական վորոշողները պետք են լինեն  
կոլխոզները. իսկ այլ պլանները կոլխոզները կատարել  
չեն կարող, յեթե այժմ ենթ մեր ամբողջ կոլխոզ մաս-  
սան, ամեն մի կոլխոզնիկ և կոլխոզ-ապարատը  
չզգան խնդրի մեջ կարեվորությունն ու լրջությունը  
և մինչեւ գարնանացանի սկսելը այդ պլանները չդար-  
ձնեն ամեն մի կոլխոզնիկի սեփականություն:

Նախապատրաստական այս ամբողջ շրջանում ամեն  
մի կոլխոզնիկ և կոլխոզ ապարատի աշխատող որվա-  
աշխատանքից հետո պետք է իրեն հաշխալ տա, ար-  
դյոք կատարեց իր վրա դրած պարտականությունը,  
արդյոք ձեվական կերպով այդ որը չանցկացրեց, կամ  
իր կոլխոզային խիզճը բախարարված է այդ որվա աշ-  
խատանքից:

## 9. ՍՊԻՐԱՆՔԱՅԻՆ ԽՈՇՈՐ ԿՈԼԽՈԶՆԵՐ ԱՏԵՂՄԵԼՈՒ

## ՀԱՐՑԸ

Մեր կոլխոզները հիմնականում դեռ մնացել են  
չափազանց թույլ և վոչ ապրանքային, ու վոչ մասնա-  
գիտացած: Այդպիսի կոլխոզներ լավ եր կազմակեր-  
պել յերեկ, նրանք հանդուրժելի յեն այսոր, բայց վա-  
զը դրանք սկսեաք և ձեվավոխվելն՝ խոշոր ապրանքային  
ֆարբիկա-կոլխոզների:

Ի՞նչ կոլխոզ, վոր կազմի միայն իր համար, ի՞նչ  
կոլխոզ, վոր իր ապրանքային յելունքով թե՛ իր դրու-  
թյունը չլավացնի և թե՛ քաղաքի պրոլետարիատին  
հումուշիթ և կենսամթերք չհասցնի: Ի՞նչ կոլխոզ, վոր  
միշտ հույսը կընի կառավարության վրա, վորպեսզի  
կառավարությունը սորենային կարգով պահի այդ կոլ-  
խոզին:

Դրա համար ել մեր բոլոր կոլխոզները գյուղա-  
անտեսական մի վորեւե ուղղություն պետք են ընդունեն,  
մասնագիտանան և դրանով գրաղմեն շատ լավ ու հիմ-  
նովին, իսկ մյուս ճյուղերը զարդարնեն վորպես ո-  
ժանդակող կամ սպասարկող հիմնական ճյուղին:

Հնգամյակի յերրորդ տարին պետք է ցույց տա,  
թե մեր կոլխոզ Փրոնտի աշխատակիցները վորքան  
ընդունակ են այդ խոշոր տնաեսությունների կազմա-  
կերպման գործում, նրանց ապրանքային դարձնելու  
գործում: Մի բան պետք է լավ իմանան մեր կոլխոզի  
աշխատակիցները, վոր առաջին հերթին նրանց աշխա-  
տանքի վորակը դնահատովելու յե շրջանի մասնագիտաց-  
ված կոլխոզի քանակով և վորակով, դրա համար ել  
այժմվանից բոլոր հնարավոր միջոցները ձեռք պետք ե-

Նախ մի համգամշանք պետք ե չեցանել. այդ կուք սուրան մեղ մոտ ժամանակավոր կուլտուրա չե, ինչ-պես շատերն են կարծում, դրանով պետք ե զբաղվել հիմովին, այսինքն պետք ե միջոցներ ձեռնարկել՝ վերականգնելու բամբակի հողերի քայլայված ստրուկտուրան: Բամբակի հողերը պետք ե պարարտացվեն, ինամ քով վարդեն ու մշակվեն: Պետք ե բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնել այժմյանից պատճովելու պլանի կատարումն ու դերակատարումը և բերքատվության ասլահովումը. դրա հետ միասին պետք ե մշակված պերսպեկտիվային խնդիրներ դնեն մեր բամբակացան շրջանների առաջ— այսինքն՝ լուրջ ու կանոնավոր կերպով պիտի մտածել հողի ստրուկտուրայի լավացման մասին. այդ հարցին, դժբախտաբար, դեռ լուծում չենք կարողանում տալ քիմիական պարարտանյութերի միջոցով. նրանք միայն սննդի նյութեր են տալիս սույսին, բայց ոդի և ջրի ուժիմի հարցերը չեն լուծում: Դրա համար ել, իմ կարծիքով, պետք ե դիմել հիմնական միջոցների դրանք հետևյաններն են — խոտացանություն (յոնջա) և զոմաղբով պարարտացնել:

Բամբակագործական մեր շրջաններում առաջիկա տարվանը լինելու յե մոտավորապես 60.000 հեկտար պետքական հող. դրա մեկ յերրորդը մշտական կերպով պետք ե պահել առվույտի տակ, իսկ մնացած 40.000-ը ցանքաշրջանառության կարգով տալ բամբակին. այդ ժամանակ միանգամայն հնարավոր կլինի գիտականութեն պարարտացված այդ հողերի բերքն ամենաքիչը կրկնապատկել. դրան ավելացրեք, վոր կըստացվի հակայական քանակությամբ առվույտ և քուսպ, վորը հնարավորություն կտա. ամենապակասը

**40-50.000 գլուռի կով պահել, վորոնք հետապայռած ստեղծված կոլխոզ քաղաքները և առհասարակ քաղաքները կազմահովեն կաթով. միաժամանակ հնարավորության կտան գոմաղբով պարարտացնել բամբակի ցանքերի ամբողջ տերիտորիան. դրանով ել հիմնովին լավացնելով հողի ստրուկտուրան առաջիկա հնդամյակի վերջին, հնարավորություն կտանք մեր կոլխոզներին բերքատվությունը հասցնել 180—200 փթի մեկ հեկտարից:**

Այդ հիմնական ուղին հարկավոր ե ընդունել, և վորքան չուտ, այնքան լավ:

(Տախտակ № 9-ը տես 32-րդ հջում):

Յերկրորդ հիմնական հարցը սամբակադրութական կայանները մեքենատրակտորային կայաններով հիմնովին դրազմին ե: Այդ կայաններն առանց այլեւայլության ողետք և դառնան մեր բամբակի կոլխոզային բաղան— կոլխոզի տրակտորը, կոլխոզի գաղափարի աղիտատորը, նրա տնտեսության հիմնական կազմակերպություն: Հետեւապես, ամբողջ տրակտորիստների բանակը պետք ե կաղմված լինի մեր լավագույն կոլխոզներին բարենք: Կայանը պետք ե յենթարկվի կոլխոզ պարարտին և աշխատի անպայման կոլխոզ բուքսիրի տակ:

Առհասարակ մեր կոլխոզների համար, մասնավորապես խոշոր ապրանքային կոլխոզների համար, խոշոր նշանակություն ունի պլանային շինարարությունը. մինչև գաբնան բացվեն անպայման մեր բոլոր կոլխոզ գյուղերը պետք ե ունենան գոնե մոտավոր նշումներով իրենց շինարարությունների հատակադիմը, այսինքն՝ այժմյանից պետք ե հայտնի լինի, թե վորտեղ պետք ե շինվեն կոլխոզի դոմերը, խողանոցները, պահեստները,

Խոշոր արդյունաբերական կոլխոզի 1931 թ. հողագործության ապարիգում.

Կոլխոզի անունը և անսահմանը	Արտադրանքի սեռականություն		
	Գանձ. և շահնշանք առաջարկի հետ կազմ- մանը	Այցար. և շահնշանք առաջարկի հետ կազմ- մանը	Տեսական չ մարդկանց գենունքը.
Բամբակագույն մատականին . . . .	23	3	8122
Այցարածական . . . .	22	4	2279
Միակ բարեկարգ մատականին . . . .	15	6	516
Բամբակագույն մատականին . . . .	16	5	439
Հացահատիկին . . . .	12	6	8288
			11
			100
			9
			170
			10
			82890

նրա պաշտաները և այլն։ Եեթե այժմ յանից այդ բանը չնախատեսեն, դրանով չպաղվեն մեր շրջանային կազմակերպությունները և իրենք կոլխոզները, ապա գարնանը կսկսվի պարտիզանական աշխատանքի և նույնիսկ վնասարարության մի մեծ սերիա, վորը հետո թերեւ կուզդվի խոշոր նյութական զոհաբերություններով։

Դրա հետ միասին մեր կոլխոզները, քանի դեռ յեռուն աշխատանքը չի սկսվել, պետք և խոշոր պատրաստություններ տեսնեն դաշտի շինարարությունն ավելի կազմակերպված դիմավորելու։ Քար, ավազ և զանազան շինանյութեր մթերեն, վորպեսզի գարնան տրակտորի յերգի հետ սկսվի կոլխոզների խոշոր շինարարության յերգը։

Մյուս կարևոր հարցը, վոր կապված և խոշոր տընտեսություններ կազմակերպելու հետ, դա հողագործական ընկերություններն արտելի վերածելու հարցն ե, վորի միջոցով հնարավորություն կստեղծվի հանրայնացնել արտադրության հիմնական միջոցները։ Ի հարկ այդ հանրայնացման ժամանակ պետք և խուսափել կոլխոզների վոչ արտադրական նշանակություն ունեցող գույքի համայնացումից։ Միաժամանակ կոլխոզներին անհատական ոչտագործման տակ յեղած վատ անասունները պիտի տալ մասմթերման, դիմացն ստանալով լավագույնները։

Գալով արտադրական ընկերություններին, պետք է վոր մեր կոլխոզները նրանցով զբաղվեն, կանոնավոր կերպով նրանց ուղղակի չեֆարկեն, ուղղություն տան նրանց զարգացմանը և աշխատեն նրանց ել բարձրացնել և կոլխոզի վերածել։



## 10. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Այս տրամադրությունները, վոր նկատվում են՝ հա-  
վասարության նշան դնելու աեսակետից կոլխողի և  
դյուզական ընկերությունների մեջ, դա ճիշտ չեն: Գյու-  
ղական ընկերություն կազմակերպվում ե այն մասսայի  
մեջ, վորանել կոլխոզ հնարավոր չել լինում կազմակեր-  
պել: Գյուղական ընկերությունը կոլխոզի յե վերած-  
վում այստեղ, այն գյուղում, վորտեղ ազգաբնակության  
մնչող մեծամասնությունը դառնվում ե կոլխոզում,  
իհարկե, բացատրական աշխատանքի միջոցով:

Մյուս կարևոր հանդամանքը յես համարում են  
այն, վոր լեռնային շրջաններում, վորտեղ գյուղատրն-  
տեսության հիմնական ճյուղն անասնապահությունն ե  
և յերկազործությունն առանձին նշանակություն չու-  
նի, այդ Մըաններում տողերի կազմակերպելը միան-  
գամայն աննպատակահարմար է: Որինակ՝ Մարտո-  
նում, Բայազետում, կոլխոզի առաջին աստիճանն ուղ-  
ղակի վարկաբեկեց կոլխոզ գաղափարը. գյուղացին  
գրազվելով իր չհամայնացված անասուններով, մոռա-  
ցության տվեց հողը և կոլխոզը և այդպիսով կոլխոզը  
գրեց միանդամայն ծիծաղելի գրության մեջ:

Ուրեմն, ինչպես Միության մեջ, նույնպես և մեջ  
մոտ կոլխոզի հիմնական ձևը պետք ե համարել գյու-  
ղատնտեսական արտելը. գյուղացիության մոտ գնա-  
լիք նրա հետ պետք ե խոսել արտելի կազմակերպման  
մասին, յերբ այդ չի հաջողվում, միայն այն ժամանակ  
ունեցիտ տալ հողոգտագործական ընկերություններ  
կազմակերպելուն:

Կոլխոզ-աշխատանքի սոցիալիստական ձեւերի փայ-  
լուն որինակներ, վորքան ուղես՝ կարելի յե բերել:

Տախտակ № 10.

Սացմբցման և հարվածայնության արդյունքները  
կոլխոզներում.

Այդու բա- ցանելը մեկ հազար	Այդու ետելը	Ծխախոտի մեկ շարի վարձատրություն.	Բարեկակի չա- նաքը
Գործադր քում և վեճը	Դարձու- մացնու- թառարկ	Պահանջ մանը	Դարձու- մացնու- թառարկ
10	5	16	1-2 կ. 15 ֆ.
		8	35
			5 կ. 15 ֆ.
		15	

Զնայած գրան, կոլխոզների աշխատանքը հեռու յե  
կազմակերպված լինելուց, դեռ կոլխոզ-Փաքրիկայի  
մարդկային ուժերը հիմնականում չեն սկսել աշխա-  
տանքի Փրոնտ շարժել, ինչպես գործարանի բանվոր-  
ները: Դեռ կըլխոզներում ինչքան ուղես և ինչ տիպի  
ծուլեր ուղես՝ կդժնես; Իսկ այդ հանդամանքից կախ-

գած և ամբողջ կոլխոցի և ուժեն մի կոլխողնիկի դրս-  
թյան արագ լավացումը:

Այդ պատճառով ել այս տարի մեր կոլխողնիկների  
և ամբողջ կոլխող ապարատի ուժերը պետք է լարվին՝  
կոլխող-աշխատանքներն որինավոր և ոացիոնալ կազ-  
մակերպելու համար:

Նախ, մի հիմնական սկզբունք սեփականություն  
պետք է դառնա կոլխողնիկ և վոչ կոլխողնիկ մասսանե-  
րի համար: Կոլխողնիկի ստանալիքը վորոշվում է նրա  
դրած աշխատանքի որերի քանակով և վորակով. այ-  
սինքն՝ շատ որեր ե աշխատել, շատ ել ստանում ե, չի  
աշխատել կոլխոզում, վոչինչ չի ստանում. նրա աշխա-  
տանքի որն արտահայտվում է մթերքով՝ ցորենով, գա-  
րիսվ, կարտոֆիլով և այլն:

Յերկրորդ, բոլոր կոլխողնիկներն անպայման մաս-  
նակցում են սոցմբաժման, հարվածայնության ու գոտնը-  
վում են մի վորեե մրցակցող խմբակի կամ բրիդալայի  
մեջ. ամեն մի կոլխողնիկի տեղն ու պատիվը կոլխո-  
զում. վորոշվում ե աշխատանքի պրոցեսների նրա մաս-  
նակցությամբ:

Յերրորդ, աշխատանքի բոլոր ասպարեզներում  
մտցնել գործարքային սիստեմ և պարզեարուում: Պետք  
ե խնամքով մշակել աշխատանքի նորմաները, ամեն մի  
նորմայից բարձր աշխատողին վարձատրել իր տարած  
ավելի աշխատանքի համար: Դա կարևորագույն մի-  
ջոցներից մեկը կլինի ծույլերի դեմ կովելու:

Հնդամյակի Յ-ըդ տարվա ամենակարևոր խողիքնե-  
րից մեկն ել պետք է համարել կանանց աշխատանքի  
և այդ աշխատանքն ապահովող կենցաղային հարցերի

կարգավորումը: Կոլխողաբժման այս տարին ցուցյ  
ավեց, թե ի՞նչ հոկա զեր ունեն կտարելու կանայք  
այդ ասպարիզում: Քիչ կոլխողներ չամբացան կանանց  
բրիդաղների փայլում աշխատանքով, և քիչ կոլխողներ  
ել չուժեցին, — յերբ կանանց հետամնացությունն  
ոգտագործվեց կուլակների կողմից, և նրանց կոլխողի  
դեմ դուրս բերեց:

Անցյալի դասերով զինված, յերրորդ դարունը  
պետք ե դարձնել շրջադարձի գարուն, կանանց բազմա-  
հազար մասսաների կոլխողաբժման և նրա աշխա-  
տանքներին Ծերլու. իսկ դա հնարավոր կլինի, յերբ  
կենցաղային հարցերն առաջին հերթին կտանան իրենց  
կարևոր նշանակությունն ու լուծումը. այսինքն՝ մեր  
բոլոր, գոնե խոշոր կոլխողները կունենան իրենց ման-  
կապարտեղները և շարժական խոհանոցները, վորոնք  
կնօցը կազմատեն թոնըից և աման-չամանից ու նրան  
աղամարդի հետ հավասար մասնակից կղարձնեն կոլ-  
խողինարարության խոշոր աշխատանքներին:

Չորրորդ կարևոր հարցը, դա կոլխողների արտա-  
դրական խորհրդակցությունների և արտադրական  
հանձնաժողովների աշխատանքների հարցն է: Դրանք  
պարբերաբար պետք է քննեն կոլխողների արտադրա-  
կան պրոցեսների ուսցիոնալիզացիայի հարցերը, և դը-  
րանով ել մասսաներին մասնակից կանեն կոլխոզ շինա-  
րարության խնդիրներին: Վոչ մի կոլխոզ առանց ար-  
տադրական խորհրդակցության և առանց նրա պարե-  
րաբար աշխատանքների:

Մեր աղիտացիայի և պրոպագանդայի հիմքը պետք  
է կազմի նաև աշխատանքի հերոսներին վոդեվո-  
րելը, նրանց մասսայականացնելը. նրանցով պետք

զբաղվեն մեր պատի թերթերը, կոլխոդյերեկույթները։ Կոլխոդյան աշխատանքի հերոսը պետք է լինի ամեն մի կոլխոդնիկի հերոսը, նրա պարծանքի ու յերգի հերոսը։

Յեկ, վերջապես, մյուս կարևոր հանդամանքը, վարը նույնպես կապված է աշխատանքի կաղմակերպման հետ, դա բերքի բաշխման վերջին հրահանգն է։ Նրա ճիշտ կիրառման և մասսայականացման հարցը։ Այսոր, յերբ հաշվետու տարին փակում ենք և թեսակոխում Յ-րդ տարին, պետք է արձանագրել, վոր չառ քիչ կոլխոդներ ունենք, վորոնք ճշգրիտ կերպով ղեկավարվել են բերքի բաշխման հրահանգով։ Բոլորն ել այս կամ այն կերպ բաշխման ասպարիզում մոռացել են բերքն ըստ չնչերի բաշխելու սկզբունքը, վորը հիմնական պատճառ է դառել մեր կոլխոդների դանդաղ աճման և կոլխոդնիկների մեծ տոկոսի աշխատանքներին չժամանակցելուն։

Մյուս խոչոր մեղանչումը բերքի բաշխման ասպարիզում, դա գույքատերերին հասանելիք 5 տոկոսի ֆոնդի հարցն եւ նրանք այդ անպայման պետք է ստանան, համաձայն իրենց դրած գույքի, հակառակ դեպքում կդանդաղեցնենք միջակների կոլխոզ գալը և առիթ կտանք գույքը վաճառել, վոնչացնել և ապա կույող գալ։

Մեր կոլխոդները և կոլխոդնիկներն աշխատանքի կազմակերպման ասպարիզում նկատված վերոհիշյալ հիմնական թերություններով պետք է զբաղվեն և այն ել հիմնովին զբաղվեն, շտկեն և կարգավորեն այն հենց դա յել կլինի մեր կոլխոդների ամրացման, խոշորացման, ապրանքային դառնալուն, կոլխոդնիկների դրության լավացման և առհասարակ կոլխոդներն ամե-

լի բարձր նտապի անցնելու հիմնական յերաշխիքը։

Բանվոր դասակարդի և նրա ավանդարդ կոմ։ Կուտակցության կամքով այսոր մեզ կոլխոդֆրոնաի աշխատակիցներիս այս պատասխանատու ժամանակաշրջանում, յերբ « գյուղատնտեսության և նրա հիմնական նյութերի բախտը սրանից հետո վարչելու յեն սովորներն ու կոլխոզները» (Ստալին), վիճակված է գլխավորել մասսաների այդ մեծ բեկումը։

Ամեն մի կոլխոզ, բրիգադիր, ամեն մի կոլխոզ նախագահ, առհասարակ ամեն մի կոլխոզ ֆրոնտի աշխատակից կրկնապատկած, յեռապատկած յեռանդով և գասակարդային զգոնությունով պետք է գլխավորե չքավոր և միջակ մասսաների արշավը դեպի կոլխոզ, հանուն այդ մասսաների և բանվոր դասակարգի փայլուն ապագայի, սոցիալիզմի կառուցման— անդամ մեհաճետամիաց գյուղում։

362  
362  
G 32-K  
348

4780 7 404

89

481

МД

РД

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
СОВЕТСКИХ  
АКАДЕМИИ НАУК  
СССР



А. МУРАДЯН

Переломный год колхозного движения

«Ազգային գրադարան



NL0217070

5

30. 716

II